# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնք, Գ.ԱՐՋՈՒՏ, Հեռ.
093 19 91 34 , arjut.lori@mta.gov.am

N ԳԱ102
*20 դեկտեմբեր 2017թ.*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ Լոռու մարզի Արջուտ համայնքի ավագանու թիվ 28-Ա, 29-Ն և 30-Ն որոշումները:

20.12.2017

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

*Կատ.* ՝

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

15.12.2017թ. թիվ 28-Ա

# ՈՐՈՇՈՒՄ

## ԱՐՋՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, 34-րդ հոդվածի 5-րդ և 7-րդ կետերով, <<Համայնքային ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասով, 3-րդ մասի 3,1 կետով, 26-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետով, <<Հանրային Ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Արջուտի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների նկատմամբ իրենց զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխան դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճանի համար սահմանել հավելավճար՝ տվյալ պաշտոնի համար համայնքի ավագանու որոշմամբ հաստատված դրույքաչափի 5%-ի չափով:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Տիգրան | | | |
| Դալլաքյան Վազգեն | | | |
| Խոյեցյան Հովհաննես | | | |
| Մկրտչյան Սաթենիկ | | | |
| Շահինյան Անդրանիկ | | | |

Արջուտ համայնքի ղեկավար՝ Վ. Շ. Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15.12.2017թ. թիվ 29 -Ն

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով և 19-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ հոդվածներով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Տիգրան | [signature] | | |
| Դալլաքյան Վազգեն | [signature] | | |
| Խոյեցյան Հովհաննես | [signature] | | |
| Մկրտչյան Սաթենիկ | [signature] | | |
| Շահինյան Անդրանիկ | [signature] | | |

Արջուտ համայնքի ղեկավար [signature, stamp] Վ. Ճ. Մկրտչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

15.12.2017թ. թիվ 30 -Ն

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ համայնքի 2018 թվականի բյուջեն՝

1.Եկամուտների գծով – 30530.9 հազար դրամ, այդ թվում՝

--վարչական բյուջեի մասով – 30530,9 հազար դրամ

--ֆոնդային բյուջեի մասով – 4 750 000 դրամ:

2.Ծախսերի գծով – 30530,9 հազար դրամ, այդ թվում՝

--վարչական բյուջեի մասով – 30530,9 հազար դրամ

--ֆոնդայի բյուջեի մասով – 4 750 000 դրամ:

| Ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Բաբայան Տիգրան | | | |
| Դալլաքյան Վազգեն | | | |
| Խոյեցյան Հովհաննես | | | |
| Մկրտչյան Սաթենիկ | | | |
| Շահինյան Անդրանիկ | | | |

Արջուտ համայնքի ղեկավար Վ. Շ. Մկրտչյան